Տիրույթ	
Որակի տիրույթ	Միջազգային հարաբերություններ
Կապ Որակի ապահովման եվրոպական չափանիշների և ուղենիշների պահանջներին	ՈԱԵՁՈ (ESG)չափանիշներ: 2.1, 2.4, 3.4, 3.7
Գործողության տարիներ	2021-2025
Հաստատված	ՈԱԱԿ տնօրեն
Տարբերակ	04
Տիրույթի պատասխանատու	Միջազգային հարաբերությունների պատասխանատու

<u>Ռազմավարական նպատակները</u>

- Մասնագիտական կրթության որակի ապահովման միջազգային կառույցներին անդամակցության և օտարերկրյա գործակալությունների հետ համագործակցությունը խորացնելու և լավագույն փորձի միջոցով ամրապնդել միջազգային գործընկերությունը:
    - Տեղայնացնել միջազգային լավագույն փորձը՝ այն հասանելի դարձնելով տեղական ուսումնական հաստատությունների և այլ շահակիցների համար:
    - Հավաստիացնել, որ ՈԱԱԿ- ի գործունեությունը հետևում է որակի ապահովման ոլորտում միջազգային զարգացումներին և ուղենիշներին:
- Հաշվի առնելով հայկական սփյուռքի ներուժը՝ նպաստել առաջատար ՄՈՒՀ-երում կրթություն ստացած մարկանց փորձի փոխանցմանը:

<u>Թիրախները</u>

- ՈԱԱԿ-ի հաջող անդամակցության ապահովում ENQA-ին և ընդգրկում EQAR-ում:
- ՈԱԱԿ-ի անձնակազմի բավարար վերապատրաստումների ապահովում՝ իր գործունեությունը իրականացնելու համար՝ հետևելով որակի ապահովման ոլորտում առկա միջազգային զարգացումներին և հենանիշերին:
- Միջազգային փորձագետների հավաքագրման և ոլորտային բազմազանության ապահովում:

<u>Գնահատման ցուցիչներ</u>

- ՈԱԱԿ-ը որպես գործընկեր ներգրավված է միջազգային կազմակերպություններում/Համաշխարհային բանկի, էրազմուս+ և այլն/:
- ՈԱԱԿ-ի գործունեությունը, Հայաստանի բարձրագույն կրթության համակարգի զարգացումները և լավագույն փորձը հասանելի և տեսանելի են միջազգային շահակիցների համար:
- Շահակիցները բավարարված են միջազգային լավագույն փորձի վերաբերյալ ստացված տեղեկատվությունից:
- ՈԱԱԿ-ի աշխատակիցները բավարարված են որակի ապահովման և աշխատանքային էթիկայի միջազգային զարգացումների վերաբերյալ իրենց ստացած տեղեկատվությունից:
- Միջազգային փորձագետները բավարարված են հավատարմագրման գործընթացից և ՈԱԱԿ-ի քաղաքականությունից ու ընթացակարգերից:
- ՈԱԱԿ-ի գործընթացները ճանաչվում են շահակիցների կողմից՝ որպես միջազգային լավագույն փորձի տարածման աղբյուր:
- ՈԱԱԿ-ը 2021-2022 թթ. Հաջողությամբ պահպանելու է Եվրոպական բարձրագույն կրթության ասոցիացիաի անդամակցությունը և Եվրոպական ռեգիստրում ընդգրկվածությունը:

<u>Գործողությունների նկարագրություն</u>

- ՈԱԱԿ-ի անձնակազմի կարիքների գնահատում և աջակցել նրանց մասնակցությանը միջազգային դասընթացներին:
- ՈԱԱԿ-ի անձնակազմին որակի ապահովման և աշխատանքային էթիկայի միջազգային զարգացումների վերաբերյալ տեղեկատվության տրամադրում:
- Աջակցել ՈԱԱԿ-ի մասնակցությանը կարողությունների զարգացման ծրագրերում (Համաշխարհային բանկի, էրազմուս+ և այլն):

• Միջազգային փորձագետների տվյալների բազայի ստեղծում և վարում: • Աջակցել ՈԱԱԿ-ի անձնակազմի մասնակցությանը ՈԱ միջազգային միջոցառումներին և ցանցերին, աջակցել ՈԱԱԿ-ի և ուսումնական հաստատությունների լավագույն փորձի հրապարակմանը միջազգային աղբյուրներում:
<u>Գնահատում</u> • Շարժունակության փորձի գնահատման հարցաշար(իրականացվում է յուրաքանչյուր շարժունության ծրագրից հետո): • Համաշխարհային բանկի, էրազմուս+ և այլ ծրագրերի քանակ: • Հավատարմագրման գործընթացներից հետո համակարգողի կողմից լրացված փորձագետների գնահատման հարցաթերթիկ: • Միջազգային փորձագետների արձագանքները ՈԱԱԿ ընթացակարգերի և նրանց հավատարմագրման փորձի վերաբերյալ: • Միջոցառումների գնահատման հարցումներ, արձագանքներ միջոցառման մասնակիցներից, ՁԼՄ-ների մշտադիտարկում:
<u>Պատասխանատվություն</u> Միջազգային հարաբերությունների պատասխանատու
<u>Հաշվետվություն</u> ՈԱԱԿ տարեկան հաշվետվություն
<u>Բարելավում</u> Միջազգային հարաբերությունների պատասխանատուի կողմից առաջարկվում են բարելավմանը միտված գործողությունները (թիրախների հնարավոր ճշգրտումները): Դրանք ներառվում են տարեկան որակի հաշվետվության մեջ: Տվյալ զեկույցը ներկայացնում է որակի յուրաքանչյուր ոլորտի բարելավմանը միտված գործողությունների ակնարկ:
<u>Տիրույթը կարգավորող փաստաթղթեր</u> Տարեկան հաշվետվություն

Հաստատված՝
18.10.2021թ.
ՈԱԱԿ տնօրեն
Ռուբեն Թոփչյան